

Կ Ա Ր Ծ Ի Ք

**ԱՆԱՀԻՏ ՄԱՐԳԱՐԻ ԶԱՐԳԱՐՅԱՆԻ
«ԱՆԳԼԵՐԵՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԻՐԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ
ԺԳ. 00.02.**

**«ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ» (ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ)
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ
ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Օտար լեզվի քերականության պատշաճ իմացությունը նպաստում է արդյունավետ հաղորդակցմանը: Ուստի վերջինիս փոխներգործուն մեթոդներով ուսուցումը խթանում է քերականական խրթին կառույցների դյուրին յուրացումը և ուսումնական գործընթացը ուսանողների համար դարձնում ավելի հետաքրքիր, գրավիչ և արդյունավետ: Անահիտ Մարգարի Զարգարյանի «Անգլերեն քերականության փոխներգործուն ուսուցման մեթոդական համակարգը Իրանի ավագ դպրոցում» թեմայով ատենախոսությունը նպատակաուղղված է մշակելու անգլերեն քերականության ուսուցման մեթոդական համակարգ, որը նախատեսված է Իրանի ավագ դպրոցի համար:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է անգլերենի քերականության փոխներգործուն ուսուցման մեթոդական համակարգի ստեղծման անհրաժեշտությամբ, երբ տեղի է ունենում անցում քերականության ուսուցման ավանդական մեթոդներից դեպի ժամանակակից փոխներգործուն մեթոդները:

Աշխատանքի գիտական նորույթն ապահովվում է Իրանի ավագ դպրոցի արդի պահանջներին համահունչ անգլերենի քերականության փոխներգործուն ուսուցման մեթոդիկայի մշակմամբ:

Աշխատանքը տեսական և գործնական արժեք ունի, այն կնպաստի օտար լեզվի դասավանդման մեթոդաբանության տեսական հիմքի ընդլայնմանը, իսկ

վերջնարդյունքները կարող են կիրառվել անգլերենի քերականության ուսուցման, ինչպես նաև դասերի պլանավորման, դասընթացների նախագծման և կազմակերպման գործընթացում:

Աշխատանքի առաջին գլխում՝ «Անգլերեն քերականության ուսուցման առանձնահատկությունները Իրանի հանրակրթական դպրոցում», ներկայացվում են քերականության ուսուցման փոխներգործուն մեթոդները, սահմանվում են «ինտերակտիվ» եզրույթը, հաղորդակցական հայեցակարգը, աջակցման տեխնոլոգիան, Իրանի ավագ դպրոցում անգլերեն քերականության ուսուցման մեթոդները, քերականության ուսուցման փոխներգործուն մոդելը, ինչպես նաև ներկայացվում են այն փոխներգործուն մեթոդները, որոնք արդյունավետ են որոշակի դասանյութի շրջանակներում ստեղծված քերականական առաջադրանքները կատարելիս:

Երկրորդ՝ «Անգլերենի քերականության փոխներգործուն ուսուցման մոդելն Իրանի ավագ դպրոցում» վերտառությամբ գլխում քննարկվում են կոմպետենտային մոտեցումը, վերջինիս կիրառման պատմությունը Իրանի կրթական համակարգում, վերլուծվում են հաղորդակցական մոտեցման տեսանկյունից Իրանի միջնակարգ դպրոցի դասագրքերը, անգլերենի քերականության ուսուցման վերճանաչողական և ճանաչողական ռազմավարություններն ուսուցման փոխներգործուն մեթոդների կիրառման համատեքստում, ինչպես նաև ներկայացվում են համաուսուցման մոդելների կիրառման հնարավորությունները Իրանի ավագ դպրոցում:

Երրորդ գլուխը նվիրված է խաղերի միջոցով անգլերենի քերականության ուսուցմանը, սահմանվում են խաղերի տեսակները, այդ թվում՝ առցանց, որոնք կիրառվում են քերականության ուսուցման փոխներգործուն կադապարում: Փորձարարական ուսուցման արդյունքները փաստում են, որ ատենախոսի կողմից առաջարկվող մեթոդական համակարգը արդյունավետ է անգլերենի քերականության ուսուցման բոլոր փուլերում, քանի որ փորձարարական խմբում ներգրավված

աշակերտների ցույց տված արդյունքները բոլոր չափանիշներով գերազանցում են ստուգողական խմբում ներգրավված աշակերտների արդյունքներից:

Ատենախոսության հիմնական դրույթները սեղմ և հստակ ներկայացված են «Եզրակացություն» բաժնում:

Այսպիսով՝ կարելի է փաստել, որ Անահիտ Զարգարյանը իրականացրել է իր առջև դրված բոլոր խնդիրները և նշանակալից արդյունքների հասել:

Ըստ արժանվույն գնահատելով ատենախոսի կատարված աշխատանքը՝ այդուհանդերձ կցանկանայինք ստանալ որոշ պարզաբանումներ հետևյալ հարցերի վերաբերյալ:

1. Աշխատանքի առաջին գլուխը վերնագրված է «Անգլերեն քերականության ուսուցման առանձնահատկությունները Իրանի հանրակրթական դպրոցում» : Այնուամենայնիվ, մանրամասն ընթերցմամբ տպավորություն է ստեղծվում, որ քննարկվում են անգլերենի քերականության ուսուցման առանձնահատկությունները, որոնք համընդհանուր կիրառություն ունեն բոլոր հանրակրթական դպրոցների համար, և տեսական մասը չի արժարժում Իրանի ավագ դպրոցներում քերականության ուսուցման բնորոշումները: Այդ իսկ պատճառով նպատակահարմար կլիներ առաջին գլուխը անվանել «Անգլերեն քերականության ուսուցման առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում», հատկապես, հաշվի առնելով այն փաստը, որ երկրորդ գլխի անվանումը համընկնում է առաջին գլխի առաջին ենթագլխի վերնագրի հետ, և այստեղ արդեն իսկ փաստացի քննարկվում է անգլերենի քերականության փոխներգործուն ուսուցման մոդելն Իրանի ավագ դպրոցում:

2. Երկրորդ գլխի առաջին ենթագլխում խոսվում է քերականական կոմպետենցիայի սահմանման և ձևավորման մասին: Կցանկանայինք, որ ատենախոսը նշեր, թե ինչպես է սահմանվում քերականական կոմպետենցիան իր հետազոտության շրջանակներում և քերականական կոմպետենցիայի ինչպիսի բաղադրիչներ են պահանջվում Իրանի ավագ դպրոցներում:

3. Երկրորդ գլխի 57-58 էջերում ատենախոսը նշում է, որ հայ մեթոդիստներին բնորոշ չէ ընթերցել «բացի ռուսերենից մեթոդական գրականություն այլ լեզուներով, այն տրամաբանությամբ, որ ռուսալեզու գրականությունը չի շրջանցում ոչ մի նոր գիտական տեսություն կամ մոտեցում: Սակայն դա այդպես չէ: Երբեմն շատ հասկացություններ, ինչպես ցույց է տալիս հայալեզու մեթոդական գրականության վերլուծությունը, այդպես էլ չեն մեկնաբանվում ռուսալեզու մեթոդական հանրության կողմից:» Կցանկանայինք՝ ատենախոսը պարզաբանել, թե կոնկրետ ինչ հասկացություններ չեն մեկնաբանվում ռուսական մեթոդական գրականության շրջանակներում:

4. Էջ 64-ում խոսվում է ազգային /հայկական, պարսկական, անգլիական/ ժողովրդական խաղերի արդյունավետության մասին: Կարո՞ղ եք պարզաբանել՝ ինչպես եք մեկնաբանում «ազգային խաղ» հասկացությունը, և արդյո՞ք դրա տարատեսակները ազգային առումով տարբերվում են անգլերեն քերականության ուսուցման արդյունավետության տեսակյունից:

5. Աշխատանքի երրորդ գլուխը նվիրված է անգլերենի քերականության փոխներգործուն ուսուցման մեթոդական համակարգի արդյունավետության փորձարարական ստուգմանը: Արդյո՞ք փորձագիտական վերլուծության ընթացքում հաշվի է առնվել սովորողների խոսքային և ոչ խոսքային վարքագծի գենդերային հայեցակերպը, ինչպես նշվում է ատենախոսության 15-րդ էջում հատկապես դերային խաղերի կազմակերպման ժամանակ:

6. Աշխատանքում առկա են բազմաթիվ լեզվաոճական և տպագրական սխալներ (2, 15-18, 20-25, 30, 33, 36, 40, 41, 43....)

Վերը նշված նկատառումներն ու դիտողություններն ամենևին չեն ստվերում ատենախոսի կատարած ուսումնասիրության արժանիքները: Ընդհանուր բովանդակությամբ, աշխատանքի վերլուծական մասի հազեցվածությամբ Անահիտ Մարգարի Զարգարյանի ատենախոսությունը բավարարում է թեկնածուական աշխատանքին ներկայացվող պահանջները:

Սեղմագիրը և ներկայացված տպագիր հոդվածները ևս համապատասխանում են ատենախոսության բովանդակությանը:

Վերոնշյալը հնարավորություն է տալիս միջնորդելու ԵՊՀ գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի առաջ՝ Անահիտ Զարգարյանին շնորհելու բանասիրական գիտությունների թեկնածուի հայցվող աստիճանը՝ ԺԳ. 00.02. «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» մասնագիտության գծով:

Պաշտոնական ընդդիմախոս

ՀՊՏՀ լեզուների ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝



Լուսինե Հարությունյան

Հաստատում եմ՝ Բ.գ.դ. պրոֆեսոր Լ.Հարությունյանի ստորագրությունը:

ՀՊՏՀ գիտական քարտուղար՝



Նաիրա Դարբինյան

